



**Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ**

# **ՀԱՇՎԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ**

**(ՀՀ Երկրորդ և Երրորդ պարբերական զեկուլյց)  
հոգեկան առողջության համատեքստում**

## **Կոնտակտային տվյալներ**

Արթուր Սաքունց

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59, 2001

Հեռ.՝ (+374 322) 4 22 68

Ֆաքս՝ (+374 322) 4 12 36

Կայքէջ՝ [www.hcav.am](http://www.hcav.am)

Էլ. փոստ՝ [hcav@hcav.am](mailto:hcav@hcav.am)



## **Բովանդակություն**

Կազմակերպության մասին	4
Ընդհանուր տեղեկություններ	4
Ընդհանուր սկզբունքներ և պարտավորություններ (հոդված 1-4)	5
Ջատուկ իրավունքներ (հոդված 5-30)	6
Ջավասարությունը և խտրականության բացառումը (հոդված 5)	6
Ջաշմանդամություն ունեցող երեխաներ (հոդված 7)	8
Օրենքի առաջ հավասարությունը (հոդված 12)	9
Արդարադատության մատչելիությունը (հոդված 13)	10
Անձի ազատությունը և անվտանգությունը (հոդված 14)	12
Խոշտանգումից և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից ազատությունը (հոդված 15)	13
Անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքը (հոդված 19)	15
Տան և ընտանիքի նկատմամբ հարգանքը (հոդված 23)	16
Կրթություն (հոդված 24)	16
Առողջության իրավունք (հոդված 25)	17
Կենսապահովման բավարար մակարդակն ու սոցիալական պաշտպանությունը (հոդված 28)	18
Մասնակցությունը քաղաքական ու հասարակական կյանքին (հոդված 29)	20

## **Կազմակերպության մասին**

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը իրավապաշտպան հասարակական կազմակերպություն է, որի գործունեությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Կազմակերպության գործունեության ոլորտներից է հոգեսոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը: Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 2007 թվականից ուսումնասիրում է հոգեսոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վիճակը, բարձրաձայնում առկա խնդիրները և իրականացնում դրանց հաղթահարման ուղղությամբ ջատագովություն: Կազմակերպությունը տրամադրում է նաև անվճար իրավական աջակցություն, այդ թվում՝ հոգեսոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնում դատարանում:

Կազմակերպությունը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի անդամ է:

## **Ընդհանուր տեղեկություններ**

Ձեկույցը կազմել է «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը: Այն 2014 թ. Միավորված ազգերի կազմակերպության հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին ներկայացրել է այլընտրանքային զեկույց՝ Հայաստանի Հանրապետությունում հոգեսոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վիճակի վերաբերյալ, այնուհետև նաև առաջարկ ՀՀ առաջին զեկույցի առնչությամբ հիմնախնդիրների ցանկի վերաբերյալ:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին Հայաստանի Հանրապետության կառավարության զեկույցի ներկայացումից և կոմիտեի Եզրափակիչ դիտարկումների հրապարակումից հետո հոգեսոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման ուղղությամբ հաջողված բարեփոխումներն են՝

- «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ձևավորվել է հոգեբուժական հաստատություններում մշտադիտարկում իրականացնող հասարակական դիտորդական խումբ,
- 2020 թ. հունվարի 30-ին ՀՀ Սահմանադրական դատարանն ընդունել է որոշում՝ անչափահասների և անգործունակ ճանաչված անձանց

պատշաճ մասնակցությունն իրենց նկատմամբ իրականացվող բժշկական միջամտությունների վերաբերյալ և նրանց իրազեկված համաձայնությունն ստանալը չերաշխավորող ՀՀ մի շարք օրենքների դրույթները հակասահմանադրական ճանաչելու վերաբերյալ,

- 2021 թ. մայիսի 5-ին ընդունվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքը,
- 2022 թ. հունիսի 8-ին ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատվել է Հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2022-2026 թթ. միջոցառումների ծրագիրը,
- 2022 թ. նոյեմբերի 16-ին վավերացվել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը:

Հիմնական բարեփոխումները վերաբերում են օրենսդրական դաշտին, իսկ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման նպատակով գործնական բարեփոխումները հապաղում են: Մասնավորապես՝

- իրավունքահեն և կարիքահեն ծառայություններ գրեթե չեն ներդրվել,
- խիստ է հոգեկան առողջության ոլորտի մասնագետների կարիքը հատկապես մարզերում,
- շարունակվում է անձին անգործունակ ճանաչելու և ոչ հոժարակամ հոսպիտալացման ու բուժման պրակտիկան
- «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքը չի ընդունվել:

Ավելին, պետությունը հետընթաց է գրանցում հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման առումով՝ օրինակ՝ կասեցնելով խնամքի կենտրոններում դիտորդական խմբի գործունեությունը, ներմուծելով սահմանափակ գործունակության գաղափարը:

## **Ընդհանուր սկզբունքներ և պարտավորություններ (հոդված 1-4)**

2014-2019 թթ. գործել է Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման ռազմավարությունը, որն արդյունավետ չի իրականացվել, հոգեւոցիալական և մտավոր

հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման խնդիրները լուծում չեն ստացել<sup>1</sup>:

Մասնավորապես չեն ապահովվել հոգեկան առողջության որակյալ, կարիքահեն համայնքային ծառայություններ: Մասնագետների ներգրավման և կարողությունների զարգացման աշխատանքները ևս արդյունավետ և թիրախային չեն եղել: Նույնը կարող ենք փաստել նաև իրազեկման աշխատանքների մասին, ինչի վկայությունն են շարունակվող խարանը և խտրական վերաբերմունքն ինչպես պետական այրերի, այնպես էլ հանրության շրջանում:

Երեք տարի անց՝ 2022 թվականին, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ջատագովության և ակտիվ ներգրավման արդյունքում հաստատվել է Հոգեկան առողջության պահպանման և բարելավման միջոցառումների ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը 2022-2026 թթ. համար: Ծրագիրը հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով և ոչ թե Կառավարության որոշմամբ՝ առավել ռիսկային դարձնելով վերջինիս կատարումը: 2024 թվականի վերջին եռամսյակի դրությամբ կարող ենք արձանագրել, որ պետությունը բավարար ռեսուրսներ չի ուղղում ծրագրի իրականացման համար և առավելապես ապավինում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջոցով դրանց իրականացմանը:

### **Առաջարկվող հարցեր**

- Հոգեկան առողջության պահպանման և բարելավման ծրագրի իրականացման նպատակով որքա՞ն ֆինանսական միջոցներ է նախատեսվում հատկացնել 2025-2026 թվականների համար
- Խտրական վերաբերմունքի բացառման նպատակով իրականացվող դասընթացների և իրազեկման աշխատանքների արդյունավետությունը գնահատելու ի՞նչ մեխանիզմներ են գործում

### **Հատուկ իրավունքներ (հոդված 5-30)**

### **Հավասարությունը և խտրականության բացառումը (հոդված 5)**

Հոգեւնցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրական մոտեցումների հաղթահարման ուղղությամբ արդյունավետ և միասնական քաղաքականությունը բացակայում

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թթ. ռազմավարության իրականացումը» զեկույցը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ [evaluation\\_mental-health-strategy\\_2014-2019.pdf](#)

Է: Խնդրահարույց են թե՛ օրենսդրական կարգավորումները և թե՛ պետական մարմինների խարանող, խտրական վերաբերմունքը:

ՀՀ սահմանադրությունը և ներպետական այլ իրավական ակտեր, այդ թվում՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքն ամրագրում են հաշմանդամության հիմքով խտրականության բացառումը, այնուհանդերձ դեռևս Նախագծային փուլում Է խտրականության դեմ պայքարի ոլորտը համապարփակ կարգավորող առանձին օրենքը:

Առանձին իրավական ակտերով արգելվում է հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց որոշ պաշտոնների (դատավոր, դատախազ, ոստիկանության ծառայող և այլն) համար դիմելը:

Ոստիկանության ծառայողներն ու բժշկական կենտրոնների աշխատակիցները խուսափում են գործ ունենալ հոգեկան առողջության խնդիրներ և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց հետ: Ավելին, նույնիսկ հոգեբուժական հաստատությունների աշխատակիցներն են, իրենց աշխատանքի բնույթով պայմանավորված, այլ բուժհաստատություններում ենթարկվում խարանի:

Վերջին տարիներին հաճախակի են դարձել նաև բարձրաստիճան պաշտոնյաների կողմից՝ միմյանց քննադատելու նպատակով հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց պիտակավորող և արժանապատվությունը նվաստացնող ձևակերպումների օգտագործումը («հոգեկան հիվանդ», «մտավոր հետամնաց» և այլն): Ավելին, օրենսդիր մարմնի ներկայացուցիչները որոշակի պարբերականությամբ հանդես են գալիս հոգեւոցիալական ու մտավոր հաշմանդամության հիմքով խտրականությունը խթանող օրենսդրական նախաձեռնություններով: Այսպես, օրինակ՝ 2020 թ. սեպտեմբերին Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցության ներկայացուցիչը հայտարարել է հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող անձանց բարձրաստիճան քաղաքական պաշտոններ զբաղեցնելն արգելելու օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու գործընթաց սկսելու մասին<sup>2</sup>: Նախաձեռնությունը պաշտպանել են նաև Ազգային ժողովում մեծամասնություն ունեցող խմբակցության ներկայացուցիչներ:

Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված որոշ ծառայություններ տրամադրվում են միայն մայրաքաղաք Երևանում (օրինակ՝ խնամքի տնային ծառայությունը) և հասանելի չեն մարզերի բնակիչներին: Ընդ որում տնային խնամքի

---

<sup>2</sup> Տե՛ս «Հաշմանդամության հիմքով խտրականությունը բռնություն է անհատի արժանապատվության նկատմամբ» վերտառության հրապարակումը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ [Հաշմանդամության հիմքով խտրականությունը բռնություն է անհատի արժանապատվության դեմ. հայտարարություն | ՀԲԱՎ](#)

ծառայությունից տարեկան օգտվում է մոտ 60 անձ, ինչը չի համապատասխանում առկա կարիքին:

### **Առաջարկվող հարցեր**

- Ինչո՞վ է պայմանավորված խտրականության դեմ պայքարի ոլորտը համապարփակ կարգավորող առանձին օրենքի չընդունումը և ե՞րբ այն կընդունվի
- Ի՞նչ միջոցառումներ են իրականացվում ապահովելու ծառայությունների հասանելիությունը հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար
- Ի՞նչ միջոցառումներ են իրականացվում հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց խարանուճը բացառելու ուղղությամբ և ինչպե՞ս է գնահատվում դրանց արդյունավետությունը

### **Հաշմանդամություն ունեցող երեխաներ (հոդված 7)**

Վերջին տարիներին ավելացել է հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված համայնքահենք ծառայությունների թիվը, այնուամենայնիվ դրանք բավարար չեն: Համայնքում կարիքին համապատասխան աջակցության բացակայությունը հանգեցնում է երեխաների՝ համայնքում ներառվելու հնարավորության սահմանափակման և մեկուսացման:

«Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքով, որպես հատուկ նորմեր (lex specialis) պարունակող օրենսդրական ակտ, երաշխավորված չէ 16 տարին չլրացած երեխայի լսված լինելու իրավունքը հոգեբուժական օգնության ոլորտում: Մասնավորապես՝ օրենքի 32-րդ հոդվածով 16 տարին չլրացած երեխայի հոգեբուժական միջամտություն ստանալու կամ դրանից հրաժարվելու վերաբերյալ գրավոր իրազեկված համաձայնությունը տալիս է նրա օրինական ներկայացուցիչը:

### **Առաջարկվող հարցեր**

- Ինչպե՞ս և ե՞րբ է գնահատվել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների համար անհրաժեշտ ծառայությունների կարիքը և որո՞նք են գնահատված կարիքները
- Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաները ե՞րբ և ի՞նչպես կապահովվեն իրենց կարիքներին համապատասխան, հասանելի համայնքահենք ծառայություններով



- Ե՞րբ և ինչպե՞ս է նախատեսվում ապահովել երեխայի՝ տարիքին և հասունության աստիճանին համապատասխան լսված լինելու իրավունքը

## **Օրենքի առաջ հավասարությունը (հոդված 12)**

Անձին անգործունակ ճանաչելու պրակտիկան շարունակվում է: Ներպետական օրենսդրությունը, մասնավորապես վերանայված Սահմանադրության 48, 98, 164, 193 հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 31-րդ հոդվածը որևէ փոփոխության չեն ենթարկվել:

Ոլորտում պրակտիկայի անփոփոխության մասին են վկայում նաև վիճակագրական տվյալները: 2010 թ. հունվարի 1-ից մինչ 2012 թ. հունիս ամիսը ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում անձին անգործունակ ճանաչելու նպատակով ստացվել էր 739 դիմում, որից բավարարվել էր 447-ը, այսինքն՝ դիմումների գրեթե 60%-ը: 2019 թ. անձին անգործունակ ճանաչելու հարցով վարույթ ընդունված 140 հայցերից բավարարվել է 73.6%-ը, մերժվել միայն 6.4%-ը: 2023 թ. սեպտեմբերի դրությամբ արդեն իսկ անձին անգործունակ ճանաչելու հարցով վարույթ ընդունված 200 հայցերից բավարարվել է 109-ը (54.5%-ը):

Անձին անգործունակ ճանաչելու պատճառներ են շարունակում մնալ վերջինիս սեփականությանը տիրանալու, նրան հաստատություն տեղավորելու և այլ անձնական, սոցիալ-տնտեսական հանգամանքներ:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագրում ՀՀ կառավարության N 1030-Լ 2021 թ. հունիսի 24-ի որոշմամբ նախատեսվել էր ապահովել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց վերաբերող հարցերում որոշումներ կայացնելու իրավունքը, այդ թվում՝ ներդնելով աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմ<sup>3</sup>: Եվ թեև 2022 թ. նոյեմբերի 2-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հանրային քննարկման է դրվել «Անգործունակության ինստիտուտին ամենօրյա իրավակարգավորումների վերանայման և աջակցման միջոցով որոշումների կայացման մեխանիզմի ներդրման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, այն չի հաստատվել ներքին դիմադրության, անգործունակության լրիվ վերացման կամքի բացակայության պատճառով: Ընդ որում, միջոցառումը ոչ միայն չի

<sup>3</sup> Տե՛ս «Օրակարգում՝ անգործունակության ինստիտուտի վերացումը» վերտառությամբ հրապարակումը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ [Օրակարգում՝ անգործունակության ինստիտուտի վերացումը | ՀԲԱՎ](#)

իրականացվել, այլև չի ներառվել հաջորդ` 2023-2025 թթ. գործողությունների ծրագրում:

Ավելին, 2024 թ. հոկտեմբերի 28-ին նույն հարթակում տարածվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու նախագիծ, որով առաջարկվում է անձին ճանաչել ոչ միայն լրիվ անգործունակ, այլ նաև սահմանափակ գործունակ` «եթե հոգեկան խանգարումն ամբողջությամբ չի ազդում քաղաքացու` իր գործողությունների նշանակությունը հասկանալու, դրանց հետևանքները նախատեսելու կամ դրանք ղեկավարելու ունակության վրա»: Այսինքն անգործունակության ինստիտուտն աջակցության միջոցով որոշումների կայացման համակարգով փոխարինելու ուղղությամբ աշխատանքների փոխարեն ներդրվում է սահմանափակ գործունակության ինստիտուտը` Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի վերջերս հրապարակված զեկույցի հիման վրա:

### **Առաջարկվող հարցեր**

- Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում անգործունակության ինստիտուտի վերացման ուղղությամբ և ի՞նչ ժամկետներում
- Որո՞նք են ուղենիշները, որոնց համապատասխան կատարվելու են փոփոխությունները
- Ինչպե՞ս է ապահովվելու հոգեցնցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց, նրանց ընտանիքի անդամների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավվածությունը գործընթացին

### **Արդարադատության մատչելիությունը (հոդված 13)**

Չնայած Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի` Հայաստանին ներկայացրած մտահոգությանը ծառայությունների` գնային առումով ոչ բավարար հասանելիության առումով, որևէ լուծում չի տրվել ոչ հոժարակամ բուժման վերաբերյալ կամ անգործունակ ճանաչված անձի կողմից դատական վճիռը բողոքարկելու համար պետական տուրք վճարելու պարտավորության հարցին: Ավելին, ավելացել է ֆինանսական բեռը` արդարադատությունը դարձնելով էլ ավելի անմատչելի և անհասանելի: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում 2021 թ. ընդունված փոփոխություններով դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատական ակտերի դեմ բողոքների համար պետական տուրքի գործող դրույքաչափերը միջինում ավելացել են չորս անգամ, մինչդեռ անձին անգործունակ ճանաչելու հայցով դիմողն ազատված է պետական տուրք մուծելու պարտավորությունից: Մտահոգիչ է նաև դատական պրակտիկան:

2018-2020 թթ. ավելի քան 20 տոկոս դեպքերում անգործունակ ճանաչվող անձինք չեն մասնակցել դատական նիստերին և չի ապահովվել նրանց լաված լինելու իրավունքը:

Օրենսդիրը տարբերակված մոտեցում է ցուցաբերել նաև քաղաքացուն հոգեբուժական կազմակերպություն և ոչ հոժարակամ հոսպիտալացման և ոչ հոժարակամ բուժման ենթարկելու վերաբերյալ վճիռների վերացման դիմում ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց միջև: Քաղաքացուն հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարակամ բուժման ենթարկելու վերաբերյալ դատարանի վճռով սահմանված ժամկետից շուտ անձի ապաքինվելու դեպքում բժշկական կազմակերպությունն իրավունք ունի դիմելու դատարան ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ վճիռը վերացնելու համար (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 270.1 հոդվածի 1-ին մաս), մինչդեռ անձը կամ նրա ընտանիքի անդամը՝ ոչ, այն դեպքում, երբ նման իրավունքը վերապահված է անձին անգործունակ ճանաչելու հատուկ վարույթի շրջանակներում: Նշենք, որ 2024 թ. հոկտեմբերի 28-ին շրջանառվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն իրականացնելու նախագիծ, որի համաձայն դատարան դիմելու իրավասություն է տրվում նաև անձին և նրա օրինական ներկայացուցչին:

«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով սահմանվում է անձի՝ հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, այդ թվում՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված հանրային պաշտպանություն (5-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետ): 2021-2023 թթ. ընթացքում իրավաբանական աջակցության համար դիմել է 121 անձ (ընդ որում, 120-ը նույն հաստատությունից): Ըստ այդմ, հոգեբուժական հաստատություններում բուժում և խնամք ստացող մոտ 1100 անձանց միայն 11 տոկոսն է 3 տարվա ընթացքում դիմել իրավաբանական օգնության: Ավելին, 7 հաստատություններից միայն մեկն է ապահովել անձին ոչ հոժարակամ բուժման ենթարկելու հայց ներկայացնելու դեպքում փաստաբան ներգրավելու պահանջը՝ դիմելով հանրային պաշտպանի գրասենյակին:

## **Առաջարկվող հարցեր**

- Մինչ ոչ հոժարակամ հոսպիտալացման ու բուժման և անգործունակության համակարգերի վերացումը ինչպե՞ս է երաշխավորվելու անգործունակ ճանաչելու և ոչ հոժարակամ հոսպիտալացման, հետազոտության և/կամ բուժման վերաբերյալ վերջնական դատական ակտերը բողոքարկող անձանց կամ նրանց ներկայացուցիչների պետական տուրք չվճարելը
- Ինչպե՞ս է նախատեսվում ապահովել ազատության փաստացի սահմանափակման պահից իրավաբանական օգնություն ստանալու

անձի իրավունքը՝ անկախ իր կամ իր օրինական ներկայացուցչի դիմումի առկայության փաստից

## **Անձի ազատությունը և անվտանգությունը (հոդված 14)**

Հոգեւորահալալի և մտավոր հաշմանդամություն ունեցող, ներառյալ՝ անգործունակ ճանաչված անձանց ոչ հոժարակամ հոսպիտալացումն ու բուժումը, ինչպես նաև երկարաժամկետ մեկուսացումը խնամքի կենտրոններում և հոգեբուժական հաստատություններում շարունակվում է: 2020 թ. ընդունված «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով ամրագրվում է անձի ոչ հոժարակամ հոսպիտալացումն ու բուժումը՝ «հոգեկան առողջության խնդիր ունեցող անձից բխող վտանգը (ներառյալ՝ իր կամ այլ անձանց կյանքի կամ առողջության համար) կանխելու նպատակով» (հոդված 24): Օրինական ներկայացուցիչ ունենալու (այդ թվում՝ անգործունակ ճանաչված լինելու) դեպքում *նույնիսկ հոժարակամ օգնությունն ու սպասարկումն* իրականացվում է օրինական ներկայացուցչի համաձայնությամբ՝ որոշ բացառություններով՝ «16 տարին լրացած երեխան կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձը հոգեբուժական միջամտություն ստանալու կամ դրանից հրաժարվելու վերաբերյալ գրավոր իրազեկված համաձայնությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, տալիս է, եթե՝ 1) բժիշկ-հոգեբույժի կարծիքով 16 տարին լրացած երեխան կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձն ունակ է հասկանալու հոգեբուժական միջամտության կամ դրա բացակայության հնարավոր հետևանքները. 2) այդ տեղեկությունները չեն վնասի 16 տարին լրացած երեխային կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձին. 3) կոյուրացնեն նրանց հոգեբուժական օգնության և սպասարկման տրամադրումը» (հոդված 17):

Ըստ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքէջի տվյալների՝ 2012-2017 թթ. ընթացքում ավարտվել է ոչ հոժարակամ բուժման վերաբերյալ 289 գործ: Հայցը բավարարող դատավճիռ կայացվել է 226 գործով (գործերի 78 տոկոսի դեպքում): Բողոքարկվել է այդ դատավճիռների միայն մոտ 1 տոկոսը (2 դեպք): 2018-2023 թթ. ընթացքում ավարտվել է 652 գործ: Հայցը բավարարող դատավճռով է ավարտվել 494 գործ (գործերի 75.8 տոկոսը), բողոքարկվել է գործերի միայն 2 տոկոսը (10 դեպք):

Հաճախակի են դեպքերը, երբ անձի հոժարակամությունը ձևական բնույթ է կրում. անձի «պարտադրված» համաձայնությունը դառնում է հոգեբուժական հաստատությունից առավել արագ դուրս գալու նախապայման: Բացի դրանից՝ անձի ոչ հոժարակամ հոսպիտալացումն ու բուժումը երբեմն պայմանավորված է ոչ թե նրա առողջական վիճակով, այլ խնամակալի անձնական շահով:

## Առաջարկվող հարցեր

- Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում ոչ հոժարակամ հոսպիտալացման ու բուժման վերացման ուղղությամբ և ի՞նչ ժամկետներում է նախատեսվում օրենսդրության համապատասխանեցումը Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով սահմանված պահանջներին
- Որո՞նք են ուղենիշները, որոնց համապատասխան կատարվելու են փոփոխությունները
- Ինչպե՞ս է ապահովվելու հոգեոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց, նրանց ընտանիքի անդամների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավվածությունը գործընթացին

## Խոշտանգումից և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից ազատությունը (հոդված 15)

Բարձր է հոգեբուժական հաստատությունները որպես պատժի մեխանիզմ կիրառելու ռիսկը. անձը, սեռական կողմնորոշմամբ կամ կրոնական պատկանելությամբ պայմանավորված, կարող է հայտնվել հոգեբուժական հաստատությունում և դիտարկվի նրան հարկադիր բուժելու հավանականությունը: Ավելին, հոգեբուժական հաստատություններում գտնվող անձանց նկատմամբ կիրառվում են զսպման միջոցներ պատժելու նպատակով: Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է դեպք, երբ անձը 7 օր պահվել է ֆիզիկական զսպման սենյակում՝ այդ ընթացքում քնելով ֆիզիկական զսպման համար նախատեսված մահճակալին: Ընդ որում թե՛ տվյալ անձը, թե՛ բաժանմունքում բուժում և խնամք ստացող մյուս անձինք ու բժշկական անձնակազմի ներկայացուցիչներն անձի մեկուսացումը և նրա նկատմամբ կիրառված սահմանափակումները մեկնաբանել են որպես պատժիչ միջոցի կիրառում<sup>4</sup>:

Հաստատություններում վատ վերաբերմունքը դրսևորվում է նաև արժանապատիվ կենսապայմանների բացակայությամբ: Թե՛ հոգեբուժական և թե՛ խնամքի հաստատություններում արձանագրվել են հիգիենայի ապահովման արժանապատվությունը նվաստացնող իրավիճակներ, ինչպիսիք են մի քանի զուգարանակոնքի՝ իրարից որևէ կերպ բաժան չլինելը, հիգիենիկ պարագաների՝ զուգարաններում բացակայությունը, մեկ ցնցուղից մինևույն

<sup>4</sup> Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2020 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը, էջ 56, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://ombuds.am/images/files/de9d93e7fe42e0fb57562fdea702609e.pdf> (ombuds.am)

ժամանակ մեկից ավելի անձի օգտվելը, զուգարանի թուղթը բուժառուներին ամեն օր որոշակի քանակությամբ/երկարությամբ կտրել տալը և այլն:

Արժանապատիվ անձնական խնամքի համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը խոցելի է դարձնում հատկապես կանանց: Օրինակ՝ որոշ հաստատություններում 24/7 տաք ջրի բացակայությունը էական մտահոգություն է կանանց համար հատկապես դաշտանի ժամանակ, անձնական օգտագործման հիգիենայի պարագաների (օրինակ՝ լողանալու սպունգ) համատեղ օգտագործումը լուրջ մտահոգություն է առաջացնում վարակների տարածման առումով: Կանայք խոցելի են նաև անձնական հարդարման և արտաքին տեսքի առումով: Շատերի մազերը կտրում են վարսահարդարման հմտություն չունեցող աշխատակիցները, ինչը հանգեցնում է անցանկալի արդյունքների, ինչպիսիք են չափազանց կարճ կտրվածքները: Կարճ կտրվածքի հիմնական հիմնավորումը հիգիենան է, սակայն նման մոտեցումն անտեսում է իրենց արտաքինի նկատմամբ վերահսկողություն ունենալու կանանց հիմնական իրավունքը:

Շարունակական բնույթ է կրում բռնությունը պետական հոգաձուլյալ հաստատություններում, այդ թվում՝ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ<sup>5</sup>:

### **Առաջարկվող հարցեր**

- Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում՝ բացառելու հոգեբուժական հաստատությունները որպես պատժիչ միջոց օգտագործելու պրակտիկան
- Ի՞նչ քայլեր են ձեռնարկվելու՝ ապահովելու անցումային փուլում հաստատություններում գտնվող անձանց անձնական հիգիենայի պահպանման արժանապատիվ պայմաններ, այդ թվում՝ մաքուր և առանձնացված լոգարաններ, տաք ջրի, անհատականացված հիգիենայի պարագաների հասանելիություն և հարգելու նրանց ինքնավարությունն անձնական խնամքի հարցում՝ ապահովելով վերապատրաստված անձնակազմ և մազերի խնամքի անհրաժեշտ միջոցների հասանելիություն

---

<sup>5</sup> Տե՛ս Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի և Խոշտանգումների դեմ համաշխարհային կազմակերպության կողմից ներկայացված երեխայի իրավունքների մասին ՄԱԿ կոնվենցիայի իրականացման վերաբերյալ այլընտրանքային զեկույցը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://hcav.am/wp-content/uploads/2024/03/Report.pdf>

## **Անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքը (հոդված 19)**

Չոգեսոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք շարունակում են բնակվել խնամքի կամ հոգեբուժական փակ հաստատություններում՝ զրկված անկախ ապրելու ու համայնքում ներգրավվելու իրավունքի իրացման հնարավորությունից:

Թեև Հայաստանում 2013 թ. հիմք է դրվել ապահիստիտուցիոնալացման քաղաքականությանը, այնուամենայնիվ այս տարիների ընթացքում որևէ փակ հաստատություն չի լուծարվել ապահիստիտուցիոնալացման նպատակով, իսկ առկա համայնքահենք ծառայությունների սղության պատճառով փակ հաստատություններում ընդունման հերթեր են: Ըստ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկության՝ 2024 թ. դեկտեմբերի դրությամբ հոգեկան առողջության խնդիրներ և/կամ մտավոր հաշմանդամություն ունեցող 69 անձի է համայնքում տրամադրվում շուրջօրյա խնամքի ծառայություններ փոքր խմբային տների ձևաչափով (խնամքի մեծ հաստատություններում գտնվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց թիվը 619): Բացի այն, որ դրանք հասանելի են միայն Երևանում և 10 մարզերից չորսում, փոքր խմբային տները չեն ծառայում անձին համայնքում ապրելուն պատրաստելու, անկախ կյանք վարելու հմտություններ փոխանցելու իրենց նպատակին: Ավելին, դրանք ունեն ինստիտուտի բովանդակություն, քանի որ նախատեսված են 8-20 անձանց համար, սահմանափակ է նրանց՝ իրենց կյանքի վերաբերյալ որոշումներ կայացնելու, խմբային տնից դուրս գալու և անկախ կյանք վարելու հնարավորությունը՝ համայնքային ծառայությունների ցանցի և անհրաժեշտ աջակցության բացակայության պատճառով:

Համայնքահենք ծառայությունների և դրանց ներդրման ուղղությամբ առարկայական քայլերի բացակայության պայմաններում առավել մտահոգիչ են հոգեբուժական հաստատությունների միավորումները, պետության կողմից այդ հաստատությունների վերակառուցման ծրագրերի ֆինանսավորումը: 2021 թ. հաստատվեց Չոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնը վերակառուցելու ՀՀ կառավարության մոտ 10 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ծրագիրը, այն դեպքում, երբ 2021 թվականին պետության կողմից սուբսիդավորվող 12 համայնքահենք ծառայություններին տրամադրված գումարը կազմում է ընդամենը մոտ 320.000 ԱՄՆ դոլար:

### **Առաջարկվող հարցեր**

- Ե՞րբ է նախատեսվում մշակել և հաստատել հոգեկան առողջության բնագավառում ապահիստիտուցիոնալացման ռազմավարական ծրագիր

- Արդյո՞ք գնահատված է հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ համայնքահենք ծառայությունների կարիքը, որո՞նք են դրանք
- Որքա՞ն գումար է նախատեսվում տրամադրել համայնքահենք ծառայությունների ներդրմանն ու գործունեության ապահովմանը 2025-2026 թթ.

## **Տան և ընտանիքի նկատմամբ հարգանքը (հոդված 23)**

Գործող Ընտանեկան օրենսգրքով նախատեսված են ծնողական իրավունքի սահմանափակման, որդեգրման վերացման դրույթներ, եթե անձն ունի հոգեկան առողջության խնդիրներ և ամուսնության կնքման հնարավորություն, եթե անձը ճանաչված է անգործունակ: Թեև 2024 թ. նոյեմբերին հանրային քննարկման է դրվել «Ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով ուժը կորցրած են ճանաչվում հոգեկան առողջության խնդիրների հիմքով որդեգրումը վերացնելու, ծնողական իրավունքից զրկելու դրույթները, հստակ չէ, թե երբ է ընդունվելու նախագիծը և արդյոք այդ խմբագրությամբ:

### **Առաջարկվող հարցեր**

- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի սկզբունքներին համապատասխան ինչպիսի՞ քայլեր է ձեռնարկվելու Հայաստանը՝ երաշխավորելու, որ ծնողներն իրենց երեխաներից չբաժանվեն ծնողի կամ երեխայի հաշմանդամության կամ հոգեկան առողջության խնդրով պայմանավորված

## **Կրթություն (հոդված 24)**

Չնայած հռչակված ներառականության քաղաքականությանը և դրա իրականացմանն ուղղված գործողություններին՝ փաստացի հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք զրկված են պատշաճ, իրենց կարիքներին համապատասխան կրթություն ստանալու հնարավորությունից:

Հանրակրթական դպրոցները համալրված չեն բավարար թվով և անհրաժեշտ հմտություններով մասնագետներով: Ծնողի ներգրավվածությունը դառնում է երեխայի դպրոցում գտնվելու համար անհրաժեշտ պայման: Ավելին, թեև մինչև 2022 թ. նախատեսվում էր անցում կատարել համընդհանուր ներառական կրթության՝ դադարեցնելով հատուկ դպրոցներում



հաշմանդամություն ունեցող, այդ թվում՝ հոգեւոցաբանական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների ուսուցումը, դրանք դեռևս գործում են որպես այդ երեխաների կրթօջախ:

Միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում ծրագրերը ընդհանուր են և հաշվի չեն առնում հաշմանդամություն ունեցող անձանց անհատական կարիքներն ու պահանջմունքները: Դրա պատճառներից է այն, որ դրանց մշակման և որոշումների կայացման գործընթացում ուսումնական հաստատությունները չեն ներգրավվում:

### **Առաջարկվող հարցեր**

- Ինչպիսի՞ քայլեր են ձեռնարկվում հոգեւոցաբանական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց կրթության բոլոր փուլերում իրենց անհատական կարիքներին ու պահանջներին համապատասխան որակյալ կրթություն ապահովելու ուղղությամբ
- Արդյո՞ք նախատեսվում է դադարեցնել/վերափոխել հատուկ դպրոցների գործունեությունը, ի՞նչ ուղղությամբ և ի՞նչ ժամկետներում
- Ինչպիսի՞ մեխանիզմներ են նախատեսված ձեռնարկված միջոցառումների ազդեցության գնահատման նպատակով և որո՞նք են քաղված դասերը և դրանցից հետագայում խուսափելու միջոցառումները

### **Առողջության իրավունք (հոդված 25)**

Հոգեբուժական օգնության տրամադրման հիմնական ձևը շարունակում է մնալ հոգեբուժական հաստատությունը: Ընդ որում դրանք ՀՀ 10 մարզերից հինգում հասանելի չեն:

Խնդրահարույց է ապահովվածությունը հոգեբույժներով և հոգեթերապևտներով հատկապես մարզերում: Այսպես, 2022 թվականի վիճակագրական տվյալների համաձայն՝ հոգեբուժական պրոֆիլի 97 գործող բժիշկներից 51-ը մայրաքաղաք Երևանում են: Գործող 15 հոգեթերապևտներից 14-ն են Երևանում, մեկը՝ Շիրակում: Ամբողջ հանրապետությունում մանկական հոգեբույժների թիվը 9-ն է, ընդ որում՝ Երևանում՝ 8, Շիրակում՝ մեկ: Այսինքն՝ ՀՀ 10 մարզերից 9-ը չունի հոգեթերապևտ և մանկական հոգեբույժ:

Հոգեբուժական հաստատություններում չի ապահովվել մարմնական հիվանդությունների պատշաճ կանխարգելումն ու վերահսկումը, ինչպես նաև Քովիդ-19 համավարակի պայմաններում հոգեբուժական հաստատություններում գտնվող անձանց բուժում ստանալու իրավունքը ընդհանուր տիպի բժշկական կենտրոններում: Ավելին, Քովիդ-19 համավարակի

պայմաններում չի ապահովվել նաև հոսպիտալացման և բուժման ցուցում ունեցող անձանց հոգեբուժական սպասարկումը<sup>6</sup>:

### **Առաջարկվող հարցեր**

- Ինչպե՞ս է ապահովվելու կարիքին համապատասխան իրավունքահեն հիվանդանոցային և արտահիվանդանոցային որակյալ հոգեկան առողջության ծառայությունների հասանելիությունը, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների պայմաններում
- Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում՝ երաշխավորելու հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց մարմնական հիվանդությունների բուժման նպատակով ծառայությունների հասանելիությունը, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների պայմաններում

### **Կենսապահովման բավարար մակարդակն ու սոցիալական պաշտպանությունը (հոդված 28)**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության ներքո երեխաների խնամքի հաստատություններում գտնվող հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաները 18 տարին լրանալուց հետո համայնքում աջակցող ծառայությունների սղության պատճառով շարունակում են ապրել հաստատությունում կամ տեղափոխվում են չափահաս անձանց համար նախատեսված խնամքի փակ հաստատություններ: 2024 թ. դեկտեմբերի դրությամբ գործող 5 մանկատներում բնակվում է 610 անձ, որոնցից չափահաս հաշմանդամություն ունեցող 234 անձ: Ընդ որում Խարբերդի մասնագիտացված մանկատան 250 սաներից միայն 45-ն (18 տղոս) է անչափահաս:

Պետության կողմից 2019-2022 թթ. ընթացքում իրականացվում էր մանկատան՝ 18 տարին լրացած սաներին բնակարանի գնման վկայականներ տրամադրելու ծրագիր: Այդ տարիներին մանկատան նախկին սաներին տրամադրվել է 281 գնման վկայական: Այնուհանդերձ, տվյալներ առ այն, թե այդ վկայականներից քանիսն են տրամադրվել հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց, բացակայում է, քանի որ նախարարությունը չի վարում այդ տողով առանձին վիճակագրություն: Ավելին, ՀՀ կառավարությունը 2021 թ. հոկտեմբերի 28-ին ընդունել է որոշում, որը խտրական է հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ: Այն զրկում է վերջիններիս

<sup>6</sup> Տե՛ս հասարակական դիտորդական խմբի «ՀՀ հոգեբուժական հաստատությունները նոր կորոնավիրուսային վարակի (COVID 19) պայմաններում. Սոմատիկ հիվանդությունների վերահսկման ու կանխարգելման վիճակը» (ՄԱՍ 2) գեկույցը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://hcav.am/wp-content/uploads/2021/10/Report\\_Somatic-health-care-in-psychiatric-hospitals\\_final\\_ARM.pdf](https://hcav.am/wp-content/uploads/2021/10/Report_Somatic-health-care-in-psychiatric-hospitals_final_ARM.pdf)

բնակավայր ընտրելու իրավունքից և հակասում Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիային: Մասնավորապես ՀՀ կառավարության 1774-Ն որոշմամբ սահմանվել է, որ բնակարանի գնման վկայագիր ստանալու իրավունք չունեն «ինքնասպասարկման ապահովման ունակություններ չունեցող շահառուները»:

2023 թ. բնակարանի գնման վկայական տրամադրելու ծրագիրը կասեցվել է, այնուհանդերձ պետության կողմից հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ նման խտրական տրամադրվածությունը խնդրահարույց է:

Համաձայն «Պետական նպաստների մասին» օրենքի՝ Հայաստանում հաշմանդամության նպաստները որոշվում են՝ պայմանավորված անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանով: Պետության կողմից տրամադրվող նպաստի նվազագույն չափը մոտ 92, իսկ առավելագույն չափը 100 ԱՄՆ դոլարին համարժեք ազգային դրամ է, մինչդեռ 2024 թ. երրորդ եռամսյակում նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը մոտ 197 ԱՄՆ դոլարին համարժեք ազգային դրամ է՝ ըստ Առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի և մոտ 147 ԱՄՆ դոլարին համարժեք ազգային դրամ է՝ ըստ Համաշխարհային բանկի մեթոդաբանության: Երկու դեպքում էլ նվազագույն նպաստը նվազագույն սպառողական զամբյուղից պակաս է (առաջին դեպքում 53.3 %-ով, երկրորդ դեպքում՝ 37.4 %-ով)<sup>7</sup>:

Ավելին, ծառայությունների բացակայությունը հաշմանդամություն ունեցող երեխայի ընտանիքի առնվազն մեկ անդամին զրկում է աշխատելու հնարավորությունից, ինչը բացասաբար է անդրադառնում ընտանիքի ֆինանսական ապահովվածության և որպես հետևանք՝ երեխաների բարեկեցության վրա:

### **Առաջարկվող հարցեր**

- Ե՞րբ է նախատեսվում համայնքահենք ծառայությունների ներդրումը, որոնք կկանխեն հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց բնակությունը խնամքի հաստատություններում
- Ի՞նչ հիմնավորմամբ է ընդունվել ՀՀ կառավարության 1774-Ն որոշումը, որը զրկում է մանկատան՝ 18 տարին լրացած սաներին բնակավայր ընտրելու իրավունքից
- Ի՞նչ ժամկետներում է նախատեսվում համապատասխանեցնել հաշմանդամության թոշակը առնվազն նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին

<sup>7</sup> 1 ԱՄՆ դոլարը հարարժեք է 390 հայկական դրամի

## **Մասնակցությունը քաղաքական ու հասարակական կյանքին (հոդված 29)**

Համաձայն Սահմանադրության 48-րդ հոդվածի և Ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի՝ անգործունակ ճանաչված անձինք դեռևս հնարավորություն չունեն իրացնել իրենց ընտրական իրավունքը: Մասնավորապես ՀՀ Սահմանադրությամբ «...տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք» բացառությամբ դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների: Նույնանման դրույթ իր ամրագրումն է գտել ՀՀ ընտրական օրենսգրքում:

### **Առաջարկվող հարցեր**

- Ինչպիսի՞ քայլեր են ձեռնարկվում՝ երաշխավորելու հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար ընտրական իրավունքի երաշխավորման նպատակով

Ձեկույցում ներկայացված տեսակետներն ու վերլուծությունները հեղինակներին են և պարտադիր չէ, որ արտահայտեն դրանոր կազմակերպությունների տեսակետներն ու դիրքորոշումները:

